Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-------- 2010 թվականի N---- -Ա

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 12-րդ հոդվածի 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «ՎԻԼԼԱՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ համատեղ հիմնադրել փակ բաժնետիրական ընկերություն։

2. Սահմանել, որ փակ բաժնետիրական ընկերության գործունեության առարկան է՝

1) արտադրական և այլ կեղտաջրերի մաքրման տեղային (լոկալ) կայանների ներմուծում, արտադրություն, տեղադրում, սպասարկում,

2) արտադրական և այլ կեղտաջրերի մաքրման տեղային (լոկալ) համակարգերի նախագծում, շինարարություն,

3) ջրօգտագործողների համար սահմանային թույլատրելի արտահոսքերի (ՍԹԱ) նախագծերի մշակում,

4) օրենքով չարգելված այլ գործունեություն։

3. Ընդունել ի գիտություն, որ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 100000 դրամ, որը բաժանված է 10 հասարակ (սովորական) բաժնետոմսի,10000դրամ անվանական արժեքով, իսկ Հայաստանի Հանրապետությանը պատկանող բաժնետոմսերը կազմում են ընկերության ընդհանուր բաժնետոմսերի 40 տոկոսը։

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին Հայաստանի Հանրապետության կողմից հաստատել ընկերության հիմնադիր պայմանագիրը, կանոնադրությունը և ընկերության ստեղծման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը,

ինչպես նաև ընկերությունում հանդես գալ Հայաստանի Հանրապետության անունից։

5. Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը։

ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում կա արտադրական կեղտաջրերի և այլ կեղտաջրերի մաքրման տեղային (լոկալ) կայանների անհրաժեշտություն։ Սակայն չկա այդպիսի կայանների նախագծմամբ, շինարարությամբ, ներմուծմամբ, արտադրությամբ, տեղադրմամբ, սպասարկմամբ զբաղվող մասնագիտական կազմակերպություն։ Պետական մասնակցությամբ նշված գործունեությամբ զբաղվող ընկերությունը նպատակ ունի վերացնելու այդ ոլորտի բացը։

Փակ բաժնետիրական ընկերության ստեղծմանը մասնակցելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը կնպաստի բնապահպանական որոշակի խնդիրների լուծմանը։

ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյան